Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԼԵՎՈՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ» Ա/Ձ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասը և ուսումնասիրելով «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» Հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) և «ԼԵՎՈՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ» Ա/Ձ-ի (այսուհետ՝ Ա/Ձ) միջև կնքված «ՄԱՏ-ԳՀԾՁԲ-02/24» ծածկագրով ծառայությունների ձեռքբերման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ ստորև ներկայացնում եմ «ԼԵՎՈՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումը:

Հիմնադրամի կարիքների համար **հակահրդեհային սարքերի վերանորոգման և պահպանման ծառայությունների (CO_2 պարունակող)** ձեռքբերման նպատակով Հիմնադրամի և Ա/Ձ-ի միջև 2024 թվականի փետրվարի 14-ին կնքվել է «**ՄԱՏ-ԳՀԾՁԲ-02/24**» ծածկագրով ծառայությունների ձեռքբերման պայմանագիր:

Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը (տվյալ դեպքում՝ «ԼԵՎՈՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ» Ա/Ձ-ն) ստանձնում է հակահրդեհային սարքերի վերանորոգման և պահպանման ծառայությունների (CO2 պարունակող) մատուցման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 Հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների: Պայմանագրի 1-ին կետի 1.2 ենթակետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Ծառայությունների մատուցման ժամկետ է սահմանվել Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2024թ (տվյալ դեպքում՝ պայմանագիրն ուժի մեջ է մտել 14.02.2024թ.): Համաձայն Պայմանագրի Հավելված N 1՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի՝ Ծառայություն մատուցող կազմակերպությունը պարտավոր է

Scanned with ACE Scanner

ծառայությունն իրականացնել ըստ «Ծառայության ցանկը և ժամանակացույցը» աղյուսակի: Աղյուսակում հստակ նշված է, թե Կատարողը ինչ ժամանակահատվածում է մատուցելու տվյալ ծառայությունը: Կատարողի կողմից խախտվել է աղյուսակի 1-5 կետերում նշված ծառայությունների շաբաթական մատուցումը:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱՁ-ն խախտել է Պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ չիրականացնելով Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցումը, ուստի Հիմնադրամը՝ հիմք ընդունելով վերը նշված իրավական հիմքերը, միակողմանի հրաժարվում է Ա/Ձ-ի հետ կնքված Պայմանագրից՝ համարելով այն ամբողջությամբ լուծված:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով

Scanned with ACE Scanner

սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Ընդ որում, «ՄԱՏ-ԳՀԾՁԲ-02/24» ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.14 կետի համաձայն՝ եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Ա/Ձ-ին ուղղված 29▯02▯2024թ▯ N 0-159 գրություն-ծանուցմամբ Հիմնադրամը ապահովել է ՀՀ կառավարության 2017թ▯ մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված պահանջի կատարումը:

Ելնելով վերոգրյալից գտնում եմ, որ առկա են Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա պարբերությամբ սահմանված հիմքերը և որոշում եմ՝ «ԼԵՎՈՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ» Ա/Ձ-ին ներառել նշված ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆ Յ▯ ԽԶՄԱԼՅԱՆ

Scanned with ACE Scanner